

ԵՐԵՎԱՆԻ ԱՅՍԻՆՈՍԵՐԵՐԵՏԵՆ

ՕՐԱԿՐ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ԸՌԵՒՄԻՆԱԿԱՆ

ԵՕԹՆԵՐՈՐԻ ՏԱՐԻ

ՋՄԻՒՌՆԻԱ

ՈՒՐԲԱԹ

1

ՆՈՅԵՄԲԵՐԻ

1846

ԹԻՒ 271

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԻՐ

Կոստանդնուպոլիս, 29 հոկտեմբերի

Օգոստոսիս Սուլթանը որ միշտ կրթափառի անձամբ այցելութեան երթալու իր տէրութեանը մէջ նոր հաստատուած ամէն գործարաններուն, և անոնց յառաջադիմութեանցը ակնաւորութիւն ըլլալ, բարեհաճեցաւ ամսուս 14ին երկու շաբթի տաւառութեան Հէրէքէի գործարանները թալու, ինչպէս որ նախործադրութեան ակնաւորութիւնը երկու շաբթի մը ի վեր արքունի փառօգտարանը Տաւառութեան վսեմափայլ Յօհաննէս և Պօղոս ամիրայից կառավարութեամբ կրթանի շատ յաջողութեամբ արդէն բաւական և բազմաթիւ կերպարաններ հանած է, թէ բազմաթիւ, թէ բարեզնէ և թէ մեծաթիւներն են: Օգոստոսիս Կայսրը իրեն ուղեկց ատենակալ իշխաններով մեծ ուշադրութեամբ արտօնեցաւ այս ընդարձակ գործարանին ամէն կողմը՝ մանրամասն տեղեկութիւններ ինքն իրմէն անոր արտադրութեանցը և ինչպէս բաւարարուի իրայօք: Ուստի գործատանց վերատեսուց վսեմափայլ Հիւսնի էֆէնդիին և արքունի փառօգտարանը Տաւառան ամիրաները պատիւ ունեցան հարկաւոր տեղեկութիւնները տալու Նորին Վեհափառութեանը, որ իրաւ գոհ ըլլալով իշխան գործատան այս օրինակ յառաջադիմութեանը և բարեկարգութեանը վրայ, հաճեցաւ մարդասիրտբար ի նշան կայսերական բարեհաճութեանը մէջմէկ աղափանդեալ մեծադիմ տուփ շտրկելու Տաւառան վսեմափայլ Յօհաննէս ամիրային և Պօղոս ամիրային:

Յիշուի մեծ միտքութեամբ և պարծանք է հայոց ազգին որ յիշեալ իշխանապետ ազգասէր պայազատները իրենց շարտարամտութեամբ և հաւատարիմ ծառայութեամբ միշտ արժանի ըլլալով կայսերական տաւառութեանը շտրկեցը, Նորին Վեհափառութեան մարդասիրտական յատուկ ակնարկութիւնը, որ ունի հայազգի ժողովրդոց վրայ, ի հարկէ ևս առաւել կը բազմապատկուի:

Օգոստոսիս Սուլթանը Հէրէքէի գործարանները արժանաւոր կերպով ստորաւերէն ետեւ, ամսուս 17ին հինգշաբթի կէսօրուան մօտ դարձաւ ի մայրաքաղաքը ուղեկցութեամբ իր բազմաթիւ պաշտօնատարացը: Հայտար փաշային գալու, ուսկից անցաւ մեծապար Վայսը, բոլոր պահապան զօրքերը կարգաւ կայնելէ և բաւական թնդաւ նօթներ ալ զետեղուած էին, զինուորական պատիւ մատուցանելու համար Նորին Վեհափառութեանը:

Մի փոքրիկ ճանապարհորդութիւնը նոր առիթ մը եղաւ առատագութեամբ ծաղկահասակ Վրքային իր մարդասիրական զգացողութիւնները ի գործ դնելու ամէն ազգի ժողովրդոց համար, ուսկից որ

անցաւ: Ի Խարթալ կայսերական հրամանաւ 200 էն աւելի տղայք սրտուռատեցան արքունի բժշկապետին հոգողութեամբ, և նոյն գիւղին բնակչաց բարօրութեանը համար ուրիշ օգտակար կարգադրութիւններ ալ եղան օգոստոսիս Կայսեր հայրական շնաշխարհիկ խնամքով:

Կայսերական հրովարտաւ Սիւլթան Նախկին Կոստանդնուպոլիսէ հեմմէտ Միւնիպ փաշան Կեսարիայի և Պօղոսի նահանգաց կառավարիչ անուանեցաւ փոխանակ Նէլալ փաշային:

Պատկէռացի բարձրագոյն Սուլթան իշխանը, մայրաքաղաքէն մեկնելէն առաջ, Միւնիպ Նախկին կայսերական փառօգտարանը ստորաւերէն գնաց, ուրտեղ Տաւառան վսեմափայլ Պօղոս ամիրան չղտնուելով, (բանդի Հէրէքէ գալու էր Նորին Վեհափառութեանը հետ), անոր մեծ որդին արեւադարձ Նաքէլ աղան պատիւ ունեցաւ ցըցունելու յիշեալ արքայապետ իշխանին այս ընդարձակ գործարանը, որուն ամէն կողմը ստորաւերէն մեծ ուշադրութեամբ և իրաւ գոհ եղաւ անոր բարեկարգութեանը վրայ: Վառօգտարանէն ելելէն ետքը՝ բարձրագոյն Սուլթան փոխ իշխանը Միւնիպ Նախկին գիւղը երթալով, բարեհաճեցաւ նախաձաշիկ մը ընելու Տաւառան մեծագոյն Պօղոս ամիրային տունը, ուրտեղ Նաքէլ աղան արդէն մեծ պատրաստութիւններ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆԵՐ

Յարգելի վերատեսուց Սուլթան Վարդապետ:

Պատուական օրագրոյդ 266 թուոյն Բանասիրականը, որ էր Վարդայի և Խաչմանեքի ըրած խօսակցութիւնը, մեծ հաճութեամբ կարգացի, ասոյց գիտնալով որ ամենեւին չկայ մէկը աշխարհի վրայ, որ անոր ձեռքէն ազատ ըլլայ իւր կէտայլը մէջ: Սակայն ուր էր թէ մարդկային գործոց այս անաչառ Բանասիրալը ամէն օր, գոնէ շաբթի անգամ մը, երկրագնացոյ վրայ արտօնող բոլոր մարդոց ըրած գործքերուն ամբողջ հաշիւը վերաւեր, թէ որ այնպէս ըլլար, անշուշտ ինչպէս կը յաւատարմ, աշխարհի վրայ կրտիրէր ընդհանուր խաղաղութիւն մը, մարդիկ կ'ըլլային մարդասէր, հայրենասէր ու առաքինի, մեղութիւնը բնաւ չպիտի կրնար իւր խաղաղութիւնը գնդալը կտորած ձգելով՝ երկրասարգաց մարդը վարքը արարականէ և իշխանաւոր մարդոց սրտին գութը վերցնել, արդարութեանը մուցնել, մէկ խօսքով աշխարհի քաղաքական կարգը և օրէնքը խանգարել: Վասն զի շատ մարդիկ՝ անասարժ ամբարտաւանութեամբ սրտերնին լցուած՝ իրենց անկարգ կամ մեղը հետեւելով, այնպիսի գործքերու յանձնաւ

առ կ'ըլլան, որ անձնատէր անողորմ ու բարոյական զուրկ եղող մարդ ըլլալին յայտնի է, և կ'երեւայ թէ խաչմանեք ներդաւանութեամբ հետեւնին փարուելէն առաջ կուգայ: Միւնիպ խաչմանեքս է որ մարդոյս իւր հայրենեացը, ազգին և եղբորդ գէմ ունեցած պարտաւորութիւնները կրտիրէրքնէ ու ճանձնալ կուտայ: Իսկ որմէ որ խաչմանեքը կրտիրէր, մասց աշուրները կուրնալով չտեսնէր իւր պարտքը, զորմէր կատարելով պիտի ըլլար ճշմարիտ ազգասէր, որոյմեծ և առաքինի:

Ի՞նչ մեծ պատիւ ու պարծանք է մարդոյս, որ քաղքի մը հասարակութեան գլուխ և պետ ընտրուելով, կամ ինքը իւր իշխանութեամբ և հաւրատութեամբ ժողովրդեան գլխաւորութիւնը ձեռք բերելով, գիտէ ըստ կանոնի կառավարել զանոնք, անոնց բարօրութիւնը ու երջանկութիւնը շինել, ազգի մը հարկաւոր եղած բաներէն չըրկելով բնաւ, որբերուն և այրներուն ինամբ տանիլ ու չըրկել, ինչպէս որ Մատուց պատուէրն ալ կրտիրէր, բարեկրթութիւնը և ուսումը հետեւնէ մեծընին խթանել, և այլն. անշուշտ այսպիսի մարդոց խաչմանեքը միշտ հանդիս է, ու երբէք չսուսկըր զիրենք: Իսկ ընդհանուր կան մարդիկ, որ այսպիսի իշխանութեան մէջ

գտնուելով, փոխանակ ազգին երջանկութեանը և յառաջադիմութեանը արտաճառ ըլլալու, անոնց թշուառութիւնը ու ողորմելի վիճակը կարծես թէ բնաւ աշուրներ չըրկեն, շահատիրութեան սուրբ լցուած՝ ոսկիէն իրաւ Մատուց չեն ճանչնար, ժողովուրդը տգիտութեան խաւարին մէջ կրտիրէր, իրենք գիտութեան լոյսը անոնց մէջ մտցնելու կրտիրէր, հասարակութիւնը ուսման յարգը ճանձնալ սկսելով, ծառաւորութեանը արքունի կրտիրէր, իսկ իրենք անոնց ծառաւորութիւնը լեցնելու այլեւայլ գիտարութիւններ կ'առաջարկէն: Այլապատեղ տղոց փոքրիկ գունդը գիտութեանը զրկուած և անոր հարկաւորութիւնը և շահը ազգի հասկնալով, կրտիրէր միաձայն: Սուրեն մեր վարժատուները, մինչև ե՞րբ այս սգալի տգիտութեան մէջ պիտի մնամք, իսկ այն ժողովուրդին գլխաւորը սեպուած անձինք, ակնհայտ իրենց լոյսը չտեսնելու կրտիրէն անոնց արդար գանգատները: Արեւմտեան ժամանակը մենք գիտեմք ըսելով, կրտիրէն որ յանձնառու ըլլալով անոնց տաւառութեանը՝ իրենց շահատիրութեանը կրտիրէր, փոխանակ այնպիսի մարդիկը, ու ինչպէս ինչպէս ինչպէս ընել, իրենց հայրենեաց արդաւորութեանը

ըրաժ էր արժանաւոր կերպիւ պատուելու համար զՆորին Բարձրութիւնը :

—Արքունական հրամանաւ Պաշտօնի Վարչակարանը տէրութեան լրագիրը օրինաւոր կերպիւ ամէն շաբաթ օր պիտի հրատարակուի այսուհետեւ . և կառավարութեանը յատկացեալ լուրերէն ի դատ Եւրոպայի քաղաքական և ուրիշ զանազան լուրերն ալ պիտի հրատարակէ :

—Աղմիրու Լաստիշի ընդհանուր հիւպատոս մօսիւ տը Շապէր ասպետը . որ քանի մը ամիսէ ի վեր Կոստանդնուպօլիս կը գտնուէր օգտաւորութեան համար , ամսուս 18ին ինքըզինքը սպաննեց ատրճանակը (փիշթօֆ) գլխուն արարելով : Յիշեալ երեւելի անձը շատ ատենէ ի վեր ենթակայ էր ջղային սաստիկ ակտիւ մը , որ ժամանակ ժամանակ խելքի պակասութիւն ալ կը պատճառէր . ուստի կերակրելու թէ առանկ փտանգաւ որ վարկեանի մը մէջ այս յուսահատութեան գործին ձեռք զարկէր է :

—Բիւրոյիստանի մէջ պատահած զանազան խռովութեանց պատճառաւ , կը հաստատեն թէ ճանապարհները ամենեւին ապահով չեն , և ան պակաս մարդասպանութիւններ և դողութիւններ կը լինին : Կառավարութիւնը լսելով այս դժբաղդ դիպուածները խիղիւ հարկաւոր միջոցները ի գործ դրաւ բարեկարգութիւնը նորէն հաստատելու համար այն կողմերը :

—Պաշտատէն , եկած վերջի լուրերը հոկտեմբերի 1էն են , որոնք կը ծանուցանեն թէ Վիեննայ ըստ ժամանակի ախտը կը շարունակէ մեծ կտորած ընելու ի յիշեալ մայրաքաղաքը . ուր տեղ կը հաստատեն թէ 15 օրուան մէջ 4500 անձինք մեռեր են : Դաւրիժու մէջ ալ արդէն մոտէ է այս ախտը , և հոկ . 2ին 150 հոգիէն աւելի մեռեր են :

—Ա իբանանու վաղեմի կուսակալ Նիկի Պէշիւրը , որ քանի մը ժամանակէ ի վեր Վիեննայէն քաղաքէն հեռու էր , արքունական հրամանաւ Պրուսա պիտի բնակի այսուհետեւ :

և լուսաւորութեանը համար : Այլ անոր հակառակ իրենց արծաթաթիւթեան անյադ բազմանքը կը շարունակուի համար , բնաւ խիղճ չեն ընել որ զորմէն ազգակիցն իրենց իրաւունքէն զրկուի . և սրբապիղծ մատուցներով կը զարկն ալն ու զորմութեան սրբապան գանձուն , որու վրայ է բոլոր հասարակութեան յոյսը և անկախութիւնը :

Լրդ ինչու համար այն խղճմունքը ասոնց քայլի ալ չէր թար երբեմն երբեմն այն օգտակար ու ոգեշահ խօսակցութիւնը ընելու , անոնց միտքը ձգելու իրենց պարտաւորութիւնները , և զանոնք չկատարելուն համար զիրենք չէին լսելու : Բայց ետքը ետքը թէ որ անոնք խղճմունքին երեսէն սրտերնին չեն կակղընէր , յանկարծ կը տեսնեն զիրենք իրենց արծաթաթիւթեանը զոհ եղած , իրենց փառքէն և իշխանութենէն մերկացած , և այն ատենը ասպարիւնաւոր գործքերնին երեւան ելելով , ծաղր կ'ըլլան հասարակութեան առջին :

Ներքեցէ ինձ , ով ազգասէր վերատեսու՞ , եթէ բիշմիր համարձակօրէն կը փոխիմ , վասնզի նոյն իսկ խղճմունքը յորդոր սւ քաջալերութիւն տուաւ իմ տկար գրչիս՝ անկեղծութեամբ խոստովանելու հայրենասէր ոգւոյս եռանդագին զբաղմունքիւնները , համարելով՝ գուցէ ձեր անկողնասէր ու

ԱՄՈՒՍՏԸ

Երեսուցեմ , 26 սեպտեմբերի :

Պաշտօնիս կուսակալ փեմախայ Գէհէմէտ փաշային աչալուրջ կառավարութեամբ հիմա կուհիմայ մեծ հանգստութեան և բարեկարգութեան մէջ են այս կողմերը : Ամէն ազգի ուխտաւորները խիստ ապահովութեամբ կուգան և կերթան առանց նեղութիւն մը կրելու ֆելլահներէն , որոնք առջի ժամանակները , ինչպէս յայտնի է ամէնուն , միշտ անհանդիստ կրնէին ճանապարհորդները , կը կողոպտէին զանոնք , և շատ անգամ մարդասպանութիւն ալ կը պատահէր :

Մէհմէտ փաշան Բարձրագոյն Վրան հրամանաւ համեմատ ամէն կերպ ազգու միջոցները ի գործ դնելով , Պաշտօնիս գրեթէ ամէն գլխաւոր շէյխերը հնազանդ եղուց , որոնցմէ քանի մը հոգի չափ աքսորեց ի Կիպրոս : Երոնցմէ ի զատ հաշակաւոր Լպուկուշ արտաւաճ շէյխն ալ կալանաւոր ըրաւ , որ հարկաւոր եղած ժամանակը 20 հազար հոգիէն աւելի անկանոն զօրք կը նար ունենալ իր հրամանին տակ :

Այս օրինակ բարեկարգութիւնը և անդորրութիւնը փեմախայ Գէհէմէտ փաշային խնամքով վայելելով Պաշտօնիս ժողովուրդը , անդադար բարեմաղթութիւններ կրնեն , որպէսզի այս նա հանգստի կառավարութիւնը երկար ժամանակ յիշեալ արաշտօնատարին յանձնուած մնայ :

ԼՍՏԵՐԻՆ ԼՈՒՐԵՐ

ԵՆԳՂԻՆ

Լոնդոն , 5 հոկտեմբերի :

Իւրանոյի բնակչաց խեղճութիւնը կը շարունակուի միշտ արմատեաց պակասութեան պատճառաւ , և հասարակութիւնը մեծ ահուդողի մէջ է մտաւոր սովուն ստիպելի հետեւներէն մտածելով : Այս երկրին քանի մը նահանգաց մէջ մեծ խռովութիւններ պատահեցան , քանզի հասարա-

կութիւնը տար ելլելով արդիւնցին որ ցորեն և ուրիշ արմաթ մեծ քաղաքները չկրկուին : Այսու ամենայնիւ կառավարութիւնը մեծ խնամքով ամէն կերպ ազգու միջոցները միշտ ի գործ կը դնէ Իւրանոյացւոյ օգնութեան հասնելու համար , որոնց արդէն մեծ նպատակներ եղաւ ըստ ամենայն մասին . ուստի կը յուսացուի թէ այսուհետեւ առիթ պիտի չունենան անկարգութիւններու ձեռք զարնելու , ինչպէս որ առջի բերանը կը փակուէր , մանաւանդ որ կը հաստատեն թէ Միգրիայ խորհրդարանը միտք ունի բոլորովին ազատ թող տարաւ ամէն նաւահանգիստները , որպէսզի ցորենը և զանազան արմաթք առանց տուրքի մտնեն : Մօսկոյ (Քօնէլ) անդադար կը քարոզէ հասարակութեանը կառավարութեան մարդատիրական խնամքը և հայրական գութը , որ ունի Իւրանոյի ժողովրդը , որ զիջար : Այս երկրին մէջ զատ խորհրդարանը հաստատելու համար եղած ընկերութիւնը օր ըստ օրէ տիրանալու վրայ է :

Այս օրերս ձայն մը տարածուեցաւ , թէ Վիեննայ իշխանը՝ ընդհանուր տեղակալի տնտեսով Իւրանոյի զօրաց հրամանատար պիտի կարգուի :

ԳԵՂՂԻՆ

Փարիզ , 5 հոկտեմբերի :

Կառավարութիւնը հեռագրական գծիւ լուրեր ընկալաւ Մատրիտէն , որ կը ծանուցանեն թէ բարձրագոյն Մօնթրեանսիէի և Օմալի արքայազան դքսերը սեպտեմբերի 24ին կ'ս օրէն ետքը հասեր են յիշեալ մայրաքաղաքը , ուրտեղ մեծ պատուով և փառաւորութեամբ ընդունուել են :

Պաշտօնի վեհապետ Թադուհիին ամուսնութիւնը Տօն Պրանչիքօ Տափղին հետ , և թագուհիին քրոջը պսակը Մօնթրեանսիէի արքայազան դքսին հետ՝ արժանաւոր հանգիստ կատարուել է յիշեալ ամսու 28ին :

Բարձրագոյն արքայազանները հոկտեմբերի

Տեսեալ է իմ զգծմանս , որ խաղային յարեւ , թուէին ի վերաց փտակաց ջուրց , փետուրք թեւոյ նոցա ի գոյն ոսկոյ ծիրանեւ , մարմինը նոցա նման կանաչ զմրիտոյ . ոչ կարայի թուել , քանզի բազմութիւն էին , շարժմունք նորա արագ քան զպահարկութիւն իմ . ես անդրէն դարձայ , և ահա թօթափեալ նոցա ի մէջ լինէ՛ր կորնէին ի շնչիլ երեկոյեան հաղմոյ , ծիծառն կանկր զնոսա ձկնակուն ըմբռնեալ էր զնոսա , և ի բազմութիւն ժամակաց անտի սակաւք էին մնացեալ կենդանի : Տեսեալ է իմ զմարդ ի մեծութեան զօրութեան իւրոյ , ծնօտք նորա փայլէին գեղեցկութեամբ , անդամք նորա արագաշարժ էին . ոտանոցը ձեռքի վաղէր , ուրախ լինէր ի սրտի իւրում . զի գեղեցկագոյն էր քան զայլ : Նորէն դարձայ , և ահա անկեալ գնէր ի վերայ սառուցեալ և մերկ երկրի զի անշունչ և յրսացեալ . ոտք նորա եղէն անշարժ , և ձեռք անձգելիք ինքեամբ . և այսպէս եղև նա զրաւեալ ի կենաց . վասնորոյ գոյ մահ յաշխարհի , սպականիւն ամանց ի գործոց Երաւուր : Այնչափ որ ստեղծաւ՝ կործանելոյ է . և ամենայն որ ծնաւ՝ մեռանելոյ ևս է . թող զի գեւ ևս ինձ միայնակ , մարթ է լալ :

ԼՂԳԱՆԵՐ , ԵՄԳԻՐ ԿԱԼԻՄԱՅԻ :

ՊՈՒՆՈՒԴԷՆ եկած նամակները կը ծանուցանեն թէ յիշեալ երկրին Պէյը մօտ օրերս ճամբայ պիտի ելլէ Գաղղիա և Միգրիտ այցելութեան երթալու համար ։ Ի Վարիզ մեծ պատրաստութիւններ կը լայ արժանաւոր պատուով ընդունելու համար յիշեալ բարձրապատիւ իշխանը ։

Գաղղիոյ մէջ Լիւար , Բօն և Սաօն ըսուած գետերը յորդելով մեծ վիսաներ պատճառ եղջիպայ գիւղօրէից և բաղաբաշց , շատ կամուրջներ և տներ փլեր են , և ճանապարհները քանի մը օր ամենևին անցք չտու եր են ։

ՍՊԵՆԻԷ

Լյու տէրութեան օրագիրները լեցուն են ման-
րաման տեղեկութիւններով վեհափառ Թագա-
ւոր, և անոր քրոջ Տնալուգոյ Ֆէրնանտոս
խնամահիւն ամուսնութեանը վրայօր . որոց եր-
կուքին պատկն ալ տեսարժնաւորի ՏՏին կէս գիշե-
րուն մէկուկէս ժամ մնացած փառաստօր հան-
քիւն կատարեցաւ ՚ի մեծ սրահը արքայական

[illegible]

ᑲ ᑦᑦ.

Նախկայրէիկ ջնոմութիւն
 շրէ զսիրտ իմ՝ այսօր օ
 Հովնապետիս սուրբ զԱնուն
 բովել ի քնար իմ՝ այս նոր օ
 Զոմ Վէհիս եւ զԱնուն
 եղել սէր իմ՝ շարժէ վիս ,
 ոչ ըզ պտիս եւանգումն
 բնորատէ զհոգիս ։
 Ան զն՛չ նմին տրժանի
 խոմ՝ տալել զբաւտիս օ
 Դոմ՝ Երեմիայ նո իրի
 Դիգէ նախել Վէհ Ազգիս օ
 Զիգէ կարգում՝ սուրբ Հոգի ,
 Բիւ ե հանգի՛ր յիմ՝ քնար օ
 Գիւ ինց նուազի
 Բիւմ մատաւրդ քով զու հայր ։
 Բնագի այսօր համօրէն
 Եկեղեցիս հայկաւանց
 Եղցի տնէ կառարկէն
 Բարոջուց բանին կենաց ։
 Որ բահանայք տուրք ու խալին
 Գնեալ ի զդէպ սուրէմեւ
 Եսայի սուրբ խորանին
 Բարեխօս մաղթեն լինել ։
 Եւ մանկոյնք քողովքածայն

ուղեղնայն ի տիպար ,
 բարկատարած ի մի ձայն
 Դիւան վերքերէն անդ տղար ։
 Այլ թէ ժխտէ դժիմով բազմ
 զու նոյնին ինձ զուգահից
 սախայն քե Տէ՛ր խանդակով
 զԱնուն Վէհիս երգեցից օ
 Երգեցից մինչեւ սրեգ
 Ճաճանչէ յանհուն էմեր օ
 Եւ կացից ես ոչ երբէք
 բաղիւն տաւախ ինց թել ։
 Երգեայնէն ընդ իս անդու
 մանկալք ինց Ազգիս ,
 Եւ տացէ անդէն մամուլ
 զարձաղանք իմ՝ քնարիս ։
 Զի զի՛նչ քան զայս պատէ՛ ժառ
 զերախտիս աշխոյժ սրտիս
 Զոնել Վէհիս բարեխնամ ,
 որ հոկէ ի շուք Ազգիս ։
 Թո՛ղ զի սրբոց Եւ այրեաց
 ինտիմ տանի հայրօրէն ,
 կարօտեցոց աղքատաց
 տեսուչ է եւ անօրէն ։
 Դա՛ իմամտից արգարեւ
 զհիմունարս սա կանգնեաց օ

դահլին ՚ի ներկայոյ թեան տէրութեան ատենս
կալ իշխանոց և երևելի պաշտօնատարաց և ա
նոնց արկիւնոյր, նմանապէս Ղազդիւյ դեսպա
Պրէսօնի կոմսին և կոմսուհին :

Լայ կրկին ամուսնութեանց առիթովը շատ
երևելի անձինք պատուոյ աստիճաններ ընկալանէր
Վաղդիսպէց Թագաւորին կողմանէ մօտիւ Պրէսոն
կոմը Պատուոյ Էդէնի մեծ ժապաւէնը տուաւ
մօտիւ Իսթուրիցին, որ բարձրագոյն ատենին
նախագահն է, նմանապէս ուրիշ երկու գլխաւոր
պաշտօնատարաց : Բարձրագոյնիւ Մօնթրէանիէ
դուքսն ալ Ոսկեգեղովն նշանը ընկալաւ Վէհա
փառ Թագուհիէն :

Կալէէլ ԿԷ Ս'աբիթ քառած լրագիրը սեպտեմբէ-
րի 30 Թուով արքունական հրամանագիր մը կը
հրատարակէ , որով Սպանիոյ Իգնատէ Լերկորդ
Թագուհին՝ Թագաւորի և Վէհափառութեան
տիտղոսը կը շնորհէ իր ամուսնոյն Տօն Ֆրանչիսք
Տափղ արքայադուռն իշխանին :

Մատթիոյ Նիզից գետաբան մօսիւ Պուլլէրը որ իր կառախարութեան հրամանաւը յիշեալ կրկին տմուսնութեանց ներկայ չդտնուելու համար գուրս գացած էր , ամուս 30ին վերադարձաւ 'ի մայրաքաղաքն :

CONCLUSION

Երբեք չուր մը չունիմք ծանուցանելու այ
փոքրիկ տէրութեանը վրայօք, ուրտեղ դժբաղ
դաբար անմիաբանութիւնը կը շարունակուի միշտ
քաղաքական երեւելի անձանց մէջ, որոնցմէ մէկը
այսօրնքն զօրապետ Աժնոսնոր անցեալները ինքը
զինքը սպաննեց առանց իմացուելու անոր այ
օրինակ յուսահատութեան պտուղաբեր:

Կըհոտաւանէ թէ 1 չորս Բալմէրթօնը աղղա-
րարական թուղթ մը գրած է մօտ օրերս (Յոս-
նաստանի կառավարութեանը՝ յայտ առնելու

որ երբեմն ընդ արեւ
 ո՛հ, ք ժխեմբաղք տապալեաց ։
 Սո հայկազանց բարձրութիւն
 ժառք և պարծանք Արտան ,
 տալու կայցէ Հայկեան Տուն
 անխորալ այժմ և յապա ։
 Զարթիւր ապա Տուն Հայկայ ,
 տե՛ս Հովնապետ քո Արհի ,
 զի քեզ յաւերժ պաշտպան կայ ,
 և զընտր զեհ հախմի ։
 Եւ դու Մոսիս բարձրաբերձ ,
 տախաւն 'ի լուսն կոտ անդ .
 զէր դրօշաղք օգահերձ
 ծածանեալ 'ի քոյդ գագաթ ։
 Մերկեա՛ զքօղք արիւթութեան ,
 բերկրեալ՛իւր յաւուր յայտիկ ,
 զի Վեհիս այրօր Անուն
 կոտարի նուախառիք ։
 Ահա ցնծայ և Տիգրիս
 բերկրապատուր ցնծութեամբ .
 և մե՛ն զերես խալս
 կարախառս յառաջմամբ ։
 Չայն սուր , և քէ՛ն Հայաստան
 'ի զննին ուրախ տունիս ,
 որ ննջէ քուն թախմութեան

ընդ իւր անմեղ մանկիս ։
 Երիտասարդք, սուրբ կուսմ
 երգեսցեն աշայժ 'ի սիրու
 և հեղեսցեն տրծողանք
 'ի հեւաւոր բարձր լեքինք ։
 Անուն Վեհիս երգեսցեն
 դուախիս նոր և բնտիր ,
 այլ յաւետ զայն հայրեն .
 «Սրբազան , յաւերժ կեցյ՛լիւր
 Զի ի՛նչ իւրք պահատ սո
 Անուանակցեն դասնի ,
 որ գօտեպնդ պաշտպան կո
 նարին սրբոյ մատենի ։
 Զի թէ վկայ Քրիստոսի
 էր և քաղալ պանդխտաց ,
 փսխան ճգանցն արժանի
 բնկալաւ զփառս անանց ։
 Այլ Հովնապետն իմ Ար
 թափոնք կայցէ 'ի փառաց
 որ ճի՛նչ 'ի ճի՛նչն արի
 վանն հայրենեացն օրինաց ։
 Ո՛հ , բնկալի՛ զարձանին
 զեւրոյ ճգանցն փախարեն .
 ստաւ և յերկնից խորանին
 լիաք կայեացէ լուսնդն ։

Լ՛ըգէաց ՚ի Խանդավազ արքայ
 ասէնախանարէ ծառաց
 Սանահ Լ՛ըպպէանց :

թիւ 12-դիտ) խորհրդարանը ավելին ին գոչ չէ. բա-
 ղարկան ընթացքէն, որ քանի մը ժամանակէ
 վեր 'ի գործ կը դրուի այս երկրիս մէջ, և թէ Կո-
 րսայի տէրութիւնները Յընաոստանի թագա-
 ւորութիւնը կանգնելով միտքերնին ազատ և բա-
 րեկարգ տէրութիւն մը հաստատելէր, և ոչ թէ
 անիշխանութեանց և ընկերական անկարգու-
 թեանց տեղի մը ընէլ:

Իրուսիոյ Ալպերթ իշխանը, որ նոյն տէրութեան թագաւորին և Ռուսաց կայսրուհիին եղբայրն է, Աթէնք հասաւ այս օրերս, ուրտեղ քանի մը օր մնալու է : Բարձրապատիւ արքայազուն իշխանը, որ Վալընսպէրլի կոմսի անունով ծանապարհորդութիւն կընէ, բազմաթիւ պաշտօնատարներ ուղեկից ունի իր հետը :

ՕՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԼՈՒՐԵՐ

Զմիւռնիա , 1 նոյեմբերի .

Կոտտանդեռուպօլսոյ մեծապատիւ Եփրայիմ
գրեթէ բոլոր հասարակութեան ուսումնասիր-
չան եռանդը, (որ քանի մը տարիէ ՚ի վեր ազգա-
սիրական ջանքով ՚ի գործ կը գործուի,) յիշաւ ի
վութեան և մոտերիմ շնորհակալութեան արժան-
է, քանի յիշեալ մայրաքաղաքին բաղմամբիւ հա-
ադչի մանկուոյն ուսումնական և բարոյական յա-
ռաջադիմութեանը պատճառ ըլլալէն ՚ի դատ, ու
ըիշ հայաբնակ քաղաքաց ալ բարի օրինակ և նա-
խանձաւորութեան առիթ եղաւ և պիտի ըլլայ

Ի այց այս ուսումնասիրական ջերմեռանդու
Թեան գլխավոր շարժիչ և քաջալեր ամենապատի
բարձր սրբազան Մատթեոս աղգասէր Պատրիար
գին յորչափ խորին երախտագիտութիւն ի կրպա
տաւորինք արդեօք որ հայրենասիրական անխն
ջանիւք անդադար խնամք կըտանի միշտ բոլ
դպրատանց բարեկարգութեանը վրայ անձա
ներկայ գտնուելով անոնց տարեկան և վեցամս
կան քննութեանցը, ուսումնաշնչն ընկերութեան
պաշտպան հանդիսանալով՝ Թէ արդեամբ և Թ
քաջալերական բանիւք, և և վերջապէս ամէն հն
րաւոր միջոցները ի գործ դնելով հայկադնեա
ժողովրդոց բարոյական և ուսումնական յառաջ
դիմութեանը համար, ուսիկց կախեալ է աղբիւ
երթանկութիւնը :

Վարդէն յանկալի է մեղմիշտ առիթ ունենալ
առին անդամ հայոց դպրատանց յառաջադիմո
թեանը վրայօք բան գրելու . և գոհութիւն Վ
սուծոյ այս միսթարական առիթները պոկա
լեն : Օրագրիս 269 թերթովը Լօտէմիշի դպր
տան նոր բարեկարգութիւնը հրատարակեցինք
և նախընթաց թուով ալ Լսակիւտարու ճեմար
նին նորէն բացուիլը յիշատակեցինք 'ի ցնծութի
ւրտի . ուսումնասէր հասարակութեանը . այս ա
գամ ալ կրկութամբ յօթարամտութեամբ Վո
տանդնուպօլոյ Վառակէօմիլիկի թաղին դպր
տան աշակերտաց քննութեան հանդէսը հրատ
րակելու . որ սեպտեմբերի Վին կիրակի օրը նո
թաղին սուրբ Ոսկեբերան եկեղեցւոյն մէջ կատ
րուեր է 'ի ներկայութեան ամենապատիւ բար
սրբազան Պատրիարքին , յիշեալ եկեղեցւոյն ա
մանապատիւ բարոյիչ Նորդէաս վարդապետին
սրբակրօն քահանայից , եկեղեցւոյն յարգի աղայ
տղայոց ծնողացը և ուրիշ գիտնական անձանց

Սուրբ Ստեփեբոսն եկեղեցւոյն և դպրատուն

մեծապատիւ վերատեսու չ (միւթէ վելլի) Լ. . .
սողային կարգադրութեամբը, նախ ձայնաւորի աշակերտները քանի մը հայերէն երգեր քաղցր եղանակաւ երգէր են. ետքը սրբազան պատմութեան, հայկաբանութեան, թուաբանութեան, և բարոյական վարդապետութեան վրայօք հարցաքննութիւն եղեր է գրեթէ երկու ժամուկէս:

Լյոս հանգէսին մէջ, թէպէտ քննութեան 126 աշակերտ կային, բայց ասոնցմէ միայն 32 հոգին չափահաս ըլլալով քերականութեան և վերոյիշեալ ուսմանցը կրճառայէն. որոնցմէ քսանէ հինգ տըղայք և մէկ ութամեայ աղջիկ արժանաւոր պատասխաններ տալով ոսկեզօծ խաչ սրբոյ և ստապեր են կուրծքերէն զնելու համար: Վննութեանէն ետքը մեծաշուք վերատեսու չ Լլան արժանաւոր կերպիւ շնորհակալ ըլլալով հոգաբարձու յարգելիներէն, առատ պարգևներ տուէր է գիտութեան և ձայնաւորի վարժապետաց թուաբանութեան դատատունին և խալիֆայից, մնացեալ 100 աղքատ աշակերտաց ալ քսանական փարսյ տուլով միթիթարեր է զանոնք ազգասիրաբար:

Վառակեմիւսիկի թաղին ժողովրդոց աղքատութեանը և անոնց դպրատան խեղճութեանը նա յերով, (որ հին և փոքրիկ սենեակ մըն է աշակերտաց թուոյն հետ բաղդատութեամբ) յիրաւի չէր յուսացուէր այսքան բարեկարգ յառաջագիւ մութիւն մը. որ նոյն դպրատան դատատուն (Օրթագիւղի) գիտնական մահատնի Վրիդոր վարժապետին և հոգաբարձու յարգելեաց յարատե աշխատութեանց, արդիւնքը կրնայ համարուիլ: Բայց գլխաւորապէս մեծապատիւ վերատեսու չ աղգասէր Լ. . . աղային ուսումնասիրական և բարեգութեան անխնայ ջանքը շնորհապարտ էմք անշուշտ քանզի հայրենասիրական շնաշխորհիկ սգուով միշտ խնամք կրտանի թէ յիշեալ թաղին դպրատան յառաջագիւմութեանը և թէ եկեղեցւոյն պայծառութեանը համար, և այս պատճառաւ շնտալը մեծ իրաւունքներ ստացած է Վառակեմիւսիկի ժողովրդոց և ընդհանրապէս մայրաքաղաքի բոլոր հասարակութեան մտերիմ շնորհակալութեանը վրայ:

Պաշտոտ (կոստանդնուպոլիս) հայոց դպրատունը հին չէնք և եռայարկ (իւշդաթ) տան ձևով ըլլալուն համար, այժմեան ուսումնարանաց նոր բարեկարգութիւնները անոր մէջ խօթելու դժուարութիւններ կրճագեր, վասնորոյ յիշեալ դպրատան աղգասէր վերատեսու չ (միւթէ վելլի) մեծապատիւ Զովուհանց Վէորդ աղան նոյն տեղւոյն յարգի հոգաբարձուաց հետ խորհուրդ ընելով արժան համարեր են եկեղեցւոյն դիմացը եղած մեծ պարտեզին մէջ հիմնական բարեկարգ դպրատանց ձևով նոր դպրատուն մը շինել տալ. որուն հիմնադրութիւնը հոկտեմբերի առջի օրերը եղեր է. և այս սղոգութեամբ շինութեան սկիզբնաւորութեանը ներկայ գտնուելու համար, ամենապատիւ բարձր սրբազան Պատրիարքը յատկապէս Պաշտոտ գացեր է. ուրտեղ երեք օր մնալով, իր սովորական աղջու աստեղաբանութեամբ ևս առաւել արծարծեր է հասարակութեան ուսումնասիրական եռանդը, շնորհակալ ըլլալով միանգամայն վերատեսու չ Լլիւրային արժանագով ջանքէն: Լլնունիմք թէ այս ուսումնարանին շինութիւնը լըմնալէն ետքը, գեղեցիկ բարեկարգութեանը:

Թիւններով ալ կրճախանայ ի պատիւ աղգիս:

—Հոկտեմբերի 19ին շաբաթ օրը սրբոց Լեւոն րանչաց տօնը ըլլալով, ամենապատիւ բարձր սրբազան Մատթէոս Պատրիարքին անուան տօնախմբութեան հանգէսը արժանաւոր փառաւորութեամբ կատարուեր է Վառապետի մայր եկեղեցին հայոց. ուրտեղ բազմութիւ ժողովուրդ ներկայ գտնուեր են հոգեւորական պաշտամանցը:

Լրատագէտ զգացողութիւններէ շարժեալ Լրատեան պարոն Մանուկ ուսումնական պատանին, (որ այժմ Կետիկիաշայի ուսումնարանին հայկաբանութեան վարժապետ է) գեղեցիկ քերթութեամբ մը շինած է ի շնորհաւորութիւն անուան Կորին Սրբաշուութեանը: Եւ քերթութեամբ յօժարամիտ սրտիւ կրփութեամբ հրատարակելու առաջնակայ թերթիս Բանասիրականին մէջ:

—Օմիւսնայի Մարկոսեան աղնուական Պետրոս աղան, որ քանի մը ժամանակէ ի վեր կոստանդնուպոլսոյ կառավարիչ վոեմարիայ Զաֆրդփաշային թարգմանէր, բարձրագոյն հրամանաւ որ ի 21 հոկտեմբերի առաջին խորհրդական թարգման առաւանցաւ քաղաքական կառավարութեան ժողովոյն (փոլիցիա մէճլիսի), և այս պաշտօնը տրուէր է անոր ի վարձատրութիւն մինչև յարգ ըրած իւր հաւատարիմ և ուշադիր ծառայութեանը:

—Անտրայի նորահաստատ ընկերութիւն մը երեք պատուական շագնաւ շինել առած է. որ յիշեալ մայրաքաղաքէն մինչև կոստանդնուպոլիս և Վրապիղան երթեկեւթութիւն սխիւ ընէ շարունակաբար՝ միջերկրական ծովուն քանի մը նաւահանգիստներն ալ հանդիպելով: Յիշեալ շագնաւաց անուանքը հետեւեալներն են. Լրամ, (Օմանի և Կիւմուքի): Լյոս ետքին կոստանդնուպոլիսէն գալով երէկ ձամբայ ելաւ Լիւզիս գառնալու համար:

—Վանիսայի արքունական տուրհանգիւղ (փոստ) կիրակի իրիկունը յիշեալ քաղաքէն գալու ժամանակը՝ իշմիրէն 4—5 ժամ հեռու գողերու հանդիպեր է. որոնք անոր վրայ յարձակուելով մէկ երկու հոգի մեռցուցեր են, և սուրհանգակին քով եղած 9—10 հաղար զուռուշտ առնելով փախեր են: Քաղաքի կառավարիչը անմիջապէս մէկ գունդ զօրք խրկեց այս չարագործները ձեռք բերելու համար, բայց դեռ լուր մը չեւաւ:

—Լիւզիսները Միտիլի մէջ խիտ անարժան գիւտածներ պատահեր են: Յիշեալ կղզին կառավարիչ Զանհիմն պատճառներով բանտը դրեր է Լատրիայ և: ուրիշ անբութեանց հպատակները բռնութեամբ և խտիւ վարուելով անոնց հետ. որոնց հիւստատանները թէպէտ օգեր են աղու տելու զանոնք, բայց կառավարիչը փոխանակ առնոյ խօթքին ականջ դնելու, նախատանօք վարուէր է հիւստատանց հետ ալ և Լատրիայ թարգմանին բոլոր մօրուքը փետտեր են: Միտիլի ամէն հիւստատանները այս անարժան փարմանքին դէմ անմիջապէս իրաւաբանական յայտարարութիւն մը (բրթէսթ) ընելով, իշմիրու ընդհանուր հիւստատանցը ծանուցին. և քաղաքի կառավարիչ վոեմարիայ Լլտիւլ Բատիլ պէյն ալ խնայ Միտիլի տեղակալը բերելու առաւ, որ իր ապօրինաւոր ընթացքին պատասխանը տայ:

—Քաղաքի կառավարութիւնը լուր առնելով թէ քանի մը ժամանակէ ի վեր խարդախ դրամ

(գալց ահճէ) կրփիւ էղեր Սարունիայի տէրութեան հոգատակ անձ մը, անցած շաբաթ յանկարծ յիշեալ մարդուն բնակարանը բաւական զօրք խրկեց. որոնց հետ Սարունիայի հիւստատանին պաշտօնատարներէն մէկն ալ կար: Յանցաւոր խնայ ձեռք անցաւ, ու յիշեալ հիւստատանին բանտը դրուած է այժմ. իսկ դրամակիտութեան վերաբերեալ գործիքները, որ այս անպաւն մին բնակարանը գտնուեցան, քաղաքի կառավարութեան ձեռքն են:

Կոստանդնուպոլիսէն հետեւալ լուրերը կրգրեն:

«Կոյսերական հրովարտակաւ Եփիպէֆանիս օսմանեան գետպան անուանեցաւ ի Վիլնիս փոխանակ Կաֆի էֆէնիսին, որ Լիւզիսութեան Բարձրագոյն Կոստանի անգամ ընտրուեցաւ:

«Կարբերդի վաղէմի կուսակալ միթիթարն Լյոմէր Պայիզփաշան ալ Վառնայի կառավարիչ անուանեցաւ Հայտար փաշային տեղը:

—Վառնայի պատահած գէրադը գիւտած ծոց պատճառաւ, Լատրիայ վոեմարիայ դեղպանը սղոգարարական թուղթ մը խրկեց արտաքին գործոց տեսու լի էֆէնիսին, խնդրելով որ արժանաւոր կերպիւ հատուցում ըլլայ եղած նախատանցը: Հասարակօրէն կը յուսացուի թէ բարեկամաբար և օրինաւոր կերպիւ վախճան մը կրտուի այս գործին:

«Լիւզիս գետպանատան առաջին խորհրդական թարգման միթիթ Լլիւսնը հոկտեմբերի 19ին Վրանիկի շագնաւով ձամբայ ելաւ յիշեալ քաղաք երթալու դեսպանատան վերաբերեալ քանի մը գործոց համար»:

ԼՈՒԿԱՍԻԱՆ ԼՈՒԿԱՍԻԱՆ

Չմիւսնիս, 1 նոյեմբերի:

Քաղաքիս առեւտուրը օրէ օր լուանալու վրայ է և բարենշան շարժում մը կրտեսնուի ընդհանրապէս ամէն ապրանսաց վրայօք: Բայց գէրադաբար նաւուց պահատութիւնը և նաւուղէից ողութիւնը մեծ արգելք կը լինան զանազան սակարկութեանց գործադրութեանը:

Տարոն: Շատ կուզուի Պախըրի և Վայսաքըլի տեսակները 210—220 զուռուշտ խանթարը դիւրաւաճառ են: Կըհաստատեն թէ մէկ ամսուան մէջ 4500 հակ ծախուեր է Լիւզիս և թրեւտու համար: Հասարակօրէն կը խորհուի թէ այս ապրանքին գինը բարձրանալու է: Լոյսիմ քաղաքի մէջ հաղիւ թէ 1500 հակ տորոն կայ կրտն:

Լիւզիս: Բաւական ապրանք կայ. այս օրուան արժուութիւնը 79—79ուկէս զուռուշտ է Էքին:

Ղէհրի: Լիւզիս կը ծախուի 34—35 զուռուշտ օխան պտտուական ապրանքը. իսկ Վիլիսը մէկ ջակ տեսակի ապրանքը 24—25 զուռուշտ:

Բանդակ: Կուզուի և քիչ կայ. այս օրուան գինը 240—250 զուռուշտ խանթարը ըստ տեսակին:

Լիւզիս: Լիւզիսի քամպակաց հնձայն նաւաղութիւնը տուեգուի, ինչպէս որ ամանք կը հաստատեն, ի հարկէ այն ժամանակը յիշեալ գինը ևս առաւել կը բարձրանան:

Ոչխարի բուրդ: Խիտ շատ ապրանք կայ և թուէ 160—170 զուռուշտ խանթարը գաւառաւոր ձառ է տալով:

ԻՏՊԱԼԱՆԻԱՐԿԱԼՈՒՍՈՒՍՈՅԱՐԱՐՍԵԱՆ